«ԹԵՐԹ ԷՅ ԷՄ» ՍՊԸ
ՀՀ, Երևան, 0054, Չարենցի 1
+374 (60) 528 528 editor@tert.am

"Tert am" Ltd.
RA, Yerevan, 0054, Charents 1
+374 (60) 528 528 editor@tert.am

Արմավիրի մարզպետարանի
տեղեկատվության և հասարակայնության հետ
կապերի բաժին

# Տեղեկություն ստանալու հարցում

ՀՀ սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի վերաբերյալ.

Համաձայն մեր կատարած հարցմանը՝ Արմավիրի մարզում կան արտագնա աշխատանքների չմեկնածների զբաղմունքի խնդիր: Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված սահմանները փակ լինելու պատճառով նրանք մնացել են երկրում և չունեն աշխատանք, որով կհոգան ընտանիքի հոգսերը: Համաձայն Կառավարության որոշման՝ կապիտալ շինության ոլորտում իրականացվելու էր 100 նոր նախագիծ, որում պիտի ներգրավեին այն մարդիկ, ովքեր պետք է այս սեզոնին արտագնա աշխատանքների մեկնած լինեին, բայց կորոնավիրուսի հետևանքով չեն կարողացել: Նման կարգավիճակում հայտնված մարդկանց հաշվառումը պիտի իրականացվեր մարզպետարանների կողմից և նրանք պետք է ընդգրկվեին տարատեսակ շինարարական աշխատանքներում:

1. Արմավիրի մարզում որքա՞ն է կազմում արտագնա աշխատանքների չմեկնածների թիվը:

2. Նրանցից քանի՞սն են աշխատանքային զբաղվածություն գտել:

3. Ի՞նչ աշխատանքներում են նրանք ընդգրկվել:

4. Ո՞րքան աշխատավարձ է նախատեսված շինարարական աշխատանքներում ներգրաված արտագնա աշխատանքների չմեկնածների համար:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Շնորհակալություն

Tert.am կայքի լրագրող Արփինե Հախվերդյան
(հեռ. 093410221, էլ.փոստ arpinehakhverdyan94@gmail.com )
22.07.2020 թ.